ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/69/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 6 մարտի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մարտի 6-ին քննելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/69/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, իրականացրել է 2024 թվականի մայիսի 21-ին Հանձնաժողով ներկայացված «Պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ նաև՝ Հայտարարագիր) ստուգում, որի արդյունքում պարզել է.

Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել իր հոր՝ Երվանդ Մարտիրոսյանի «Երյունյա» ՍՊ ընկերությունում բաժնեմասնակցության վերաբերյալ, մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանի հայրը 2010 թվականի նոյեմբերի 10-ից հանդիսանում է «Երյունյա» ՍՊ ընկերության 100% բաժնետեր:

Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» և «Բ.3.1 Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժիններում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել իր չափահաս որդու՝ Յուրի Մարտիրոսյանի «Գավառի ձկնաբուծարան» ՍՊ ընկերությունում բաժնեմասնակցության վերաբերյալ, մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանի որդին 2023 թվականի հոկտեմբերի 17-ից հանդիսանում է «Գավառի ձկնաբուծարան» ՍՊ ընկերության 85% բաժնեմասի սեփականատեր:

Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել իր որդիների՝ Յուրի և Նարեկ Մարտիրոսյանների «Գավառտրանս» ՍՊ ընկերությունում բաժնեմասնակցության վերաբերյալ, մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ վերջիններս 2023 թվականի ապրիլի 12-ից հանդիսանում են «Գավառտրանս» ՍՊ ընկերության 10-ական տոկոսով մասնակից:

Հայտարարագրի «Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել իր ընտանիքի անդամների՝ Յուրի և Նարեկ Մարտիրոսյանների

մասնակցությամբ «Գավառտրանս» ՍՊ ընկերության կողմից Գավառի համայնքապետարանի հետ կքնված պայմանագրի վերաբերյալ, մինչդեռ Գավառի համայնքապետարանից ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի փետրվարի 10-ին «Գավառտրանս» ՍՊ ընկերությունը Գավառի համայնքապետարանի հետ կնքել է 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամ արժողությամբ N ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-23/2 գնման պայմանագիրը:

1.2 Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 13-ին Գուրգեն Մարտիրոսյանին հասցեագրել է թիվ 01/560-2025 գրությունը՝ այն օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնված (ստացված) համարվելու օրվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 15:00-ին հրավիրելով Հանձնաժողով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 15:00-ին՝ վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Գուրգեն Մարտիրոսյանի կողմից ստացվել է 2025 թվականի փետրվարի 13-ին, որի վերաբերյալ վերջինս իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից հավաստում է ուղարկել Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային հասցեին:

1.3 2025 թվականի փետրվարի 18-ին Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցիչ Արամ Եսայանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/19/25 արձանագրությունը:

1.4 2025 թվականի փետրվարի 27-ին Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցիչ Մարիետա Գաբրիելյանի ներկայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն: Գործի քննության ընթացքում ներկայացուցչի կողմից ներկայացվել է միջնորդություն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգելու մասին՝ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու նպատակով, որը բավարարվել է Հանձնաժողովի կողմից, և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգվել է 2025 թվականի մարտի 6-ին, ժամը՝ 15:00-ին:

1.5 2025 թվականի մարտի 5-ին Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցչի կողմից Հանձնաժողով են ներկայացվել լրացուցիչ ապացույցներ:

1.6 2025 թվականի մարտի 6-ին, ժամը՝ 15:00-ին, պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի բացակայությամբ իրականացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/69/2025 գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/69/2025 գործի շրջանակներում արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2025 թվականի փետրվարի 26-ին և մարտի 5-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ հ.1424171 և հ.1431128 գրություններով Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դիրքորոշումներ հետևյալ բովանդակությամբ.

«Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ է հարուցել Գուրգեն Երվանդի Մարտիրոսյանի (այսուհետ նաև՝ Համայնքի ղեկավար) նկատմամբ: Որպես ենթադրյալ իրավախախտման փաստական հիմք է դիտարկվել Համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալների առերևույթ առկայությունը, որն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված վարչական պատասխանատվություն: Գտնում ենք, որ Համայնքի ղեկավարի գործողությունները պետք է բովանդակային գնահատման առարկա դառնա օրենսդրության համակարգային վերլուծության լույսի ներքո՝ ելնելով համայնքի ղեկավարի վարքագծի ընդհանուր սկզբունքներից, կոռուպցիայի կանխարգելման՝ որպես հիմնական նպատակից, համայնքի շահերի պաշտպանության երաշխավորումից, և խուսափել գործողությունների մակերեսային վերլուծությունից: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի և 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց

վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը, հայտարարագրման գործընթացը կանոնակարգելը, հայտարարագրերն ստուգելն ու վերլուծելը: Այս իրավակարգավորումը Հանձնաժողովի լիազորությունների տեսանկյունից ինքնանպատակ չէ և միտված է հնարավոր կոռուպցիոն ռիսկերը կանխարգելելուն: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված իրավախախտումների մասով պատասխանատվության միջոցներ կիրառելն առաջնային ու միակ միջոցը չէ հանրային ծառայողների վարքագիծն օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու համար՝ հատկապես այն դեպքերում, երբ վարքագծից նման շեղումները կատարվել են անզգուշությամբ, առանց որևէ վնաս պատճառելու կամ տեղեկատվություն թաքցնելու դիտավորության՝ այդպիսով ունենալով նվազ նշանակություն: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունեցող որակելու կանոնակարգումներին՝ արձանագրել է, որ վարչական իրավախախտման նվազ նշանակությունն ընկալվում է որպես գործողություն կամ անգործություն, որը, թեև ձևական առումով պարունակում է վարչական զանցակազմի հատկանիշներ, բայց հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և իրավախախտի անձը, վնասի չափը և հետևանքների ծանրությունը՝ էականորեն չի խախտում պահպանվող հասարակական հարաբերությունները: Իրավախախտման նվազ նշանակությունը գնահատողական կատեգորիա է, որը պահանջում է գործի քննության համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների, պաշտպանվող հասարակական հարաբերություններին սպառնացող վտանգի բնույթի և աստիճանի, անձին, հասարակությանը կամ պետությանը վնաս պատճառելու սպառնալիքի գնահատում: Արարքը նվազ նշանակության գնահատելու դեպքում անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, իսկ դրա փոխարեն կիրառվող բանավոր դիտողությունը չի համարվում վարչական պատասխանատվության

տեսակ, և, համապատասխանաբար, հաշվի չի առնվում անձի կողմից կրկնակի իրավախախտում կատարելիս: Այն ունի կանխարգելիչ նշանակություն. նպատակն իրավախախտի կողմից իր վարքի անօրինականության գիտակցումն է (տե՛ս, Աշխեն Դաշյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/5608/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2023 թվականի որոշումը): Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածով, որպես ընդհանուր նորմ ամրագրվել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ: Այսինքն՝ օրենսդիրը սպառիչ կերպով չի սահմանել այն իրավախախտումները, որոնք կարող են գնահատվել նվազ նշանակություն ունեցող, ինչպես նաև որևէ կերպ չի սահմանել, թե կոնկրետ որ իրավախախտումների վրա չեն տարածվում իրավախախտումը նվազ նշանակություն ունեցող որակելու կարգավորումները: Ընդհակառակը, օրենսդրի սահմանած իրավակարգավորման համատեքստում ցանկացած վարչական իրավախախտում իրավասու մարմնի կողմից կարող է գնահատվել որպես «նվազ նշանակություն ունեցող», մասնավորապես՝ ցանկացած իրավախախտում իրավասու մարմնի կողմից կարող է որակվել նվազ նշանակություն ունեցող, եթե այդպիսի խախտման հետևանքով օրենքով պահպանվող հասարակական հարաբերություններին՝ զանցանքի օբյեկտին, էական վնաս չի պատճառվել: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդիրը հստակ չի սահմանել, թե ինչ չափորոշիչների գնահատման արդյունքում է իրավասու մարմինն այս կամ այն իրավախախտումը որակում որպես նվազ նշանակություն ունեցող՝ այդ հարցի լուծումը թողնելով իրավասու վարչական մարմնի հայեցողությանը: Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ իրավական պետությունում պետահիշխանական լիազորություններով օժտված բոլոր սուբյեկտներին վերապահված հայեցողական լիազորությունները կարող են գործադրվել միայն իրավունքի սահմաններում: Հետևաբար հայեցողական վարչարարությունը ևս կաշկանդված, սահմանափակված է իրավունքով: Այդ իսկ պատճառով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն ամրագրել

է, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել՝

- մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ,

- իրավահավասարության սկզբունքով,

- վարչարարության իրականացման համաչափության սկզբունքով,

- կամայականության արգելքի սկզբունքով:

Վերոգրյալին հավելելով համաչափության սահմանադրահիրավական կարևորագույն սկզբունքը՝ կարող ենք արձանագրել, որ համաձայն համաչափության սկզբունքի՝ խախտման համար պատասխանատվության միջոցն ընտրելու հայեցողական լիազորությունը պետք է իրացվի առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ: Ըստ այդմ, խախտման համար պատասխանատվության միջոցն ընտրելու հայեցողական լիազորությունն իրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես արարքի ծանրությունը, հանրային վտանգավորության աստիճանը, պատճառված վնասը, այնպես էլ սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև արդարացի հավասարակշռության առկայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական տույժը համարվում է պատասխանատվության միջոց և կիրառվում է, նպատակ ունենալով վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակել (...) օրենքները պահպանելու, (...) համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը: Վճռաբեկ դատարանն ամփոփելով արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի բովանդակությունը և նպատակը հանգում է նրան, որ իրավախախտում կատարած անձը ոչ թե անհիմն ազատվի սահմանված պատժից, այլ նպաստի վարչական իրավախախտում կատարած անձին օրենքները պահպանելու, համակեցության կանոնները

հարգելու ոգով դաստիարակելուն, ինչպես նաև վերջինիս և այլ անձանց կողմից նոր իրավախախտումներ կատարելը կանխելուն:

Տվյալ դեպքում ընդունում ենք, որ Համայնքի ղեկավարը թյուրիմացաբար իր որդիներից Յուրի Մարտիրոսյանին ընդգրկել է հայտարարատու ընտանիքի անդամների ցանկում, թեև վերջինս իրականում 2023 թվականի ընթացքում 183 և ավելի օր չի բնակվել իր հետ համատեղ, այսինքն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով իրականում չի հանդիսացել հայտարարատու անձ: Այնուամենայիվ, այս խախտումն իրականում բացասական որևէ հետևանք չի առաջացրել և վնաս չի պատճառել որևէ հանրային շահի, փոխարենը լրացուցիչ պարտավորություն է առաջացրել հենց իր՝ Համայնքի ղեկավարի և իր ընտանիքի անդամի համար:

Ընդունում ենք նաև Հանձնաժողովի դիտարկումն այն մասին, որ իր անչափահաս որդու՝ Նարեկ Մարտիրոսյանի հայտարարգրում թյուրիմացաբար չեն ներառվել տեղեկատվությունն այն մասին, որ վերջինս հանդիսանում է «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊ ընկերության բաժնետեր: Ուսումնասիրելով ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջը (https://www.e-register.am/am/search)՝ կարող ենք արձանագրել, որ այն հնարավորություն է ընձեռում ըստ անձի տվյալների տեղեկություններ ստանալ ՀՀ-ում գրանցված ընկերություններում վերջինիս բաժնեմասնակցության մասին:

Որոնման դաշտում փնտրելով Նարեկ Գուրգենի Մարտիրոսյանի անուն, ազգանուն, հայրանունը՝ կարող ենք տեսնել հրապարակային և հասանելի տեղեկատվություն «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ում վերջինիս բաժնեմասնակցության ու դրա չափի վերաբերյալ (կից ներկայացնում եմ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջից 26.02.2025 թվականին վերցված քաղվածքը՝ https://www.e-register.am/am/search): Ստացվում է, որ սխալմամբ այս տվյալը հայտարարագրում չարտացոլելու հետևանքով կրկին որևէ կոռուպցիոն ռիսկ կամ հանրային շահին սպառնացող վտանգ չի առաջացել, քանի որ հանրային սահմանափակ հասանելիություն ունեցող որևէ ինֆորմացիա չի թաքցվել: Այնտեղեկատվությունը, որն անզգուշությամբ չի արտացոլվել հայտարարագրում, իրականում բաց ու հասանելի է ցանկացած անձի համար:

Ինչ վերաբերում է Համայնքի ղեկավարի հոր՝ Երվանդ Մարտիրոսյանի հայտարարագրում «ԵՐՅՈՒՆԱ» ՍՊ ընկերության 100% բաժնետեր լինելու փաստը

հայտարարագրի «Բ.3.1. Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» և «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժիններում լրացրած չլինելու հանգամանքին, պետք է Ձեր ուշադրությունը հրավիրենք այն հանգամանքի վրա, որ նույն 2023 թվականի հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում ներկայացրել է տեղեկատվություն նույն «ԵՐՅՈՒՆԱ» ՍՊԸ-ից ստացված շահաբաժնի վերաբերյալ: Ավելին, «ԵՐՅՈՒՆԱ» ՍՊԸ-ում բաժնեմասնակցության մասին տվյալները կրկին հասանելի են նաև ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջում: Բացի այդ, այս կապակցությամբ ցանկանում ենք նշել նաև, որ Գուրգեն Մարտիրոսյանը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր հոր կողմից ենթադրաբար կատարված խախտման համար, քանի որ այդ թյուրիմացությունն իր գործողությունների հետևանքը չէ: Հակառակ մեկնաբանությունն ուղղակիորեն կհակասի վարչական իրավունքի հիմնարար անձնական պատասխանատվության և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքներին: Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքները: Անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Իսկ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին (տե՛ս, Երևանի քաղաքապետարանի ընդդեմ Է. Չիլինգարյանի թիվ ՎԴ/0376/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.02.2022 թվականի որոշումը): Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ՝ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ:

Հետևաբար մեղքը՝ որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության՝ միայն անձամբ կատարած իրավախախտման համար (տե՛ս, Ծովինար Զաքարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/5879/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը): Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի նշված արժեքավոր իրավական դիրքորոշումների համատեքստում կարող ենք պնդել, որ Համայնքի ղեկավարը չի կարող վարչական պատասխանատվության ենթարկվել այն արարքի համար, որն իր մեղավորությամբ չի կատարվել: Ուստի անձնական պատասխանատվության և ըստ մեղքի պատասխանատվության հիմնարար սկզբունքների տեսանկյունից Համայնքի ղեկավարը չի կարող պատասխանատվության ենթարկվել այլ անձի կողմից հայտարարագրում թերի կամ սխալ տվյալներ ներկայացնելու համար: Եվ ի վերջո այս տեղեկատվությունը հայտարարագրում չարտացոլելու դեպքում անձին վարչական պատասխանատվության ենթարկելը կարող է անգամ դիտարկվել ձևական պահանջների չարաշահման արգելքի խախտում՝ հատկապես այն պայմաններում, երբ Հանձնաժողովի մատնանշած տեղեկատվությունը հասանելի է ինչպես Հայաստանի Հանրապետությանը՝ որպես սուբյեկտ, այնպես էլ առհասարակ հանրությանը և չի տաքցվել Համայնքի ղեկավարի կողմից: Մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Հանձնաժողովի կողմից մատնանշված պարտականությունները, մասնավորապես՝ Համայնքի ղեկավարի ընտանիքի անդամների բաժնեմասնակցության մասին տվյալները պետությանը և հանրությանը տրամադրելը,

կատարվել է՝ այդ տվյալները ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր տրամադրելով: Մինչդեռ անձը փաստացի ոչ միայն լրացուցիչ պարտականություններով ծանրաբեռնվում է, այլև կարող է ֆինանսական մեծ բեռ նախատեսող վարչական պատասխանատվության ենթարկվել, ինչը, գտնում ենք, անթույլատրելի է: Ելնելով ողջ վերոգրյալից, կարևորելով Համայնքի ղեկավարին վերագրվող արարքների բնույթը, հանրային վտանգավորության ցածր աստիճանը, հանրային շահին որևէ վնաս պատճառված չլինելու, կոռուպցիոն ռիսկեր չառաջացնելու, տեղեկատվություն թաքցրած չլինելու հանգամանքները, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության չափի էական լինելը, Հանձնաժողովի կողմից կիրառվելիք պատասխանատվության միջոցի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև արդարացի հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունը՝ խնդրում եմ Համայնքի ղեկավարին վերագրվող իրավախախտումը համարել նվազ նշանակության և բավարարվել բանավոր դիտողությամբ»:

2025 թվականի մարտի 5-ին Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացված թիվ հ.1431128 գրության համաձայն՝ ներկայացվել են գրավոր ապացույցներ առ այն, որ Յուրի Գուրգենի Մարտիրոսյանը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով չի հանդիսանում Գուրգեն Երվանդի Մարտիրոսյանի ընտանիքի անդամ և 2023 թվականի ընթացքում 183 և ավելի օր չի բնակվել վերջինիս հետ համատեղ:

Ըստ գրության՝ Յուրի Մարտիրոսյանը 2015 թվականից ի վեր մշտապես բնակվում է [redacted] Այս փաստը հաստատում են Յ. Մարտիրոսյանի հարևանությամբ բնակվող անձինք: Մասնավորապես՝ կից ներկայացնում եմ հարևանությամբ բնակվող Թագուհի Գևորգյանի, Արմեն Արմենի Խրիմյանի, Ռուզան Լևոնի Հովհաննիսյանի, Լևոն Սարգսի Ավետիսյանի 04.03.2025 թվականին տրված հայտարարություններն այն մասին, որ Յուրի Մարտիրոսյանը 2015 թվականից ի վեր բնակվում է [redacted] հասցեում: Յուրի Մարտիրոսյանը առկա ուսուցմամբ սովորում է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում 2022 թվականից ի վեր, որպիսի փաստը ևս հիմնավորում է այն հանգամանքը, որ վերջինս մշտապես բնակվում է Երևան քաղաքում:

Այդ փաստի հաստատման նպատակով կից ներկայացվել է նաև ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Տ. Ռ. Եփրեմյանի կողմից 28.02.2025 թվականին տրված տեղեկանքը:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/69/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել իր հոր՝ Երվանդ Մարտիրոսյանի «Երյունյա» ՍՊ ընկերությունում 100% բաժնեմասնակցության վերաբերյալ:

3.2 Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» և «Բ.3.1 Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժիններում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել իր չափահաս որդու՝ Յուրի Մարտիրոսյանի «Գավառի ձկնաբուծարան» ՍՊ ընկերությունում 85% բաժնեմասնակցության վերաբերյալ:

3.3 Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել իր որդիների՝ Յուրի և Նարեկ Մարտիրոսյանների «Գավառտրանս» ՍՊ ընկերությունում 10-ական տոկոսներով բաժնեմասնակցության վերաբերյալ:

3.4 Հայտարարագրի «Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել իր ընտանիքի անդամների՝ Յուրի և Նարեկ Մարտիրոսյանների մասնակցությամբ «Գավառտրանս» ՍՊ ընկերության կողմից Գավառի

համայնքապետարանի հետ 2023 թվականին կքնված 10,000,000 ՀՀ դրամի չափով պայմանագրի վերաբերյալ:

3.5 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանի հայրը՝ Երվանդ Մարտիրոսյանը 2010 թվականի նոյեմբերի 10-ից հանդիսանում է «Երյունյա» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր, չափահաս որդին՝ Յուրի Մարտիրոսյանը 2023 թվականի հոկտեմբերի 17-ից հանդիսանում է «Գավառի ձկնաբուծարան» ՍՊ ընկերության 85% բաժնեմասի սեփականատեր, Գուրգեն Մարտիրիոսյանի որդիները՝ Նարեկ Մարտիրոսյանը և Յուրի Մարտիրոսյանը 2023 թվականի ապրիլի 12-ից հանդիսանում են «Գավառտրանս» ՍՊ ընկերության 10-ական տոկոս բաժնեմասերի սեփականատեր:

3.6 Գավառի համայնքապետարանից Հանձնաժողովում ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի փետրվարի 10-ին «Գավառտրանս» ՍՊ ընկերությունը Գավառի համայնքապետարանի հետ կնքել է 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամ արժողությամբ գնման N ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-23/2 պայմանագիրը:

3.7 Գուրգեն Մարտիրոսյանի կողմից 2024 թվականի մայիսի 21-ին ներկայացված Հայտարարագրում առկա տվյալների համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանի ընտանիքի անդամներ են հանդիսանում Երվանդ Մարտիրոսյանը (հայր), Նարեկ Մարտիրոսյանը (անչափահաս զավակ), Յուրի Մարտիրոսյանը (չափահաս զավակ):

[redacted] Վարչական վարույթի ընթացքում Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացված դիրքորոշման և կից ներկայացված ապացույցների համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանի չափահաս զավակը՝ Յուրի Մարտիրոսյանը 2023 թվականի ընթացքում 183 և ավելի օր բնակվել է այլ՝ ՀՀ, [redacted]

3.9 Հայտարարագրերի էլեկտրոնային համակարգում առկա, Գուրգեն Մարտիրոսյանի 2021, 2022, և 2023 թվականների տարեկան հայտարարագրերի տվյալների համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանի կինը նույնպես փաստացի բնակվում է նշված հասցեում, այն է՝ [redacted]:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձն իր հայտարարագրում լրացնում է նաև **իր ընտանիքի անչափահաս անդամների,** ինչպես նաև իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի **գույքի,** եկամուտների և ծախսերի վերաբերյալ իրեն հայտնի տվյալները և պատասխանատու է դրանց իսկության համար:

4.3 Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, **հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:**

4.4 Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սույն օրենքի իմաստով՝ համատեղ բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում **183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը:**

4.5 Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը **և (կամ) նրա ընտանիքի անդամները,** կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Սույն մասի իմաստով իրական շահառու է

համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը:

4.6 Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի և նրա **ընտանիքի անդամների** կողմից, ինչպես նաև նրանց **մասնակցությամբ** կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերը» բաժնում նշվում են այն պայմանագրերը, **որոնց գինը (արժեքը) գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը** կամ դրան համարժեք արտարժույթը, պայմանագրի տեսակը, կողմերը, նրանց հասցեները, տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին, պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, ինչպես նաև գինը (արժեքը):

4.7 Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա **հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կնքված պայմանագրերը:**

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.9 Օրենքի 34-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1-ին կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.11 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.12 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.13 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.14 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.15 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջները ամբողջական կերպով ներկայացված են նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ

հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ գույքի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, եկամտի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, շահերի դեպքում՝ կազմակերպության անվանումը, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը, հավատարմագրային կառավարման հանձնված լինելը, ընտանիքի անդամի ներկայացվածությունը կազմակերպության կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկություններ:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով Գուրգեն Մարտիրոսյանը Հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ ոչ ամբողջական տվյալները.

- Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում տվյալներ չի ներկայացրել իր հոր՝ Երվանդ Մարտիրոսյանի «Երյունյա» ՍՊ ընկերությունում 100% բաժնեմասնակցության վերաբերյալ:
- Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» և «Բ.3.1 Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժիններում տվյալներ չի

ներկայացրել իր չափահաս որդու՝ Յուրի Մարտիրոսյանի «Գավառի ձկնաբուծարան» ՍՊ ընկերությունում ունեցած 85% բաժնեմասնակցության, ինչպես նաև «Գավառտրանս» ՍՊ ընկերությունում ունեցած 10% բաժնեմասնակցության վերաբերյալ:

➢ Հայտարարագրի «Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում տվյալներ չի ներկայացրել իր ընտանիքի անդամ, անչափահաս զավակ Նարեկ Մարտիրոսյանի մասնակցությամբ «Գավառտրանս» ՍՊ ընկերության կողմից Գավառի համայնքապետարանի հետ 2023 թվականին կնքված 10,000,000 ՀՀ դրամի չափով պայմանագրի վերաբերյալ:

Հաշվի առնելով արձանագրված խախտման նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Գուրգեն Մարտիրոսյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Անդրադառնալով Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցիչների կողմից ներկայացված՝ արարքի նվազ նշանակությամբ գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդությանը, Հանձնաժողովը գտնում է, որ այն հիմնավոր չէ և ենթակա է մերժման: Մասնավորապես, Հանձնաժողովի գնահատմամբ, այն հանգամանքը, որ հայտարարագրման ենթակա տվյալները կարող են հրապարակված լինել որևէ այլ հարթակում, դեռևս չի հանդիսանում այն հանգամանքը, որ պաշտոնատար անձի կողմից նշված տվյալների չհայտարարագրումը կարող է որակվել որպես նվազ նշանակություն ունեցող հանգամանք, քանի որ պաշտոնատար անձի կողմից հայտարարագրում ամբողջական տվյալների ներկայացման օրենսդրի նպատակը, ի թիվս այլնի, կայանում է հանրության կողմից պաշտոնատար անձի հայտարարագրի ուսումնասիրության միջոցով պաշտոնատար անձի գույքային դրության, ինչպես նաև շահերի մասին ամբողջապես տեղեկանալու իրավունքի իրագործումը, ուստի նման տվյալների չհայտարարագրումը վնասում է Օրենսդրի կողմից հետապնդվող՝ նշված նպատակը: Հանձնաժողովի

գնահատմամբ, հասարակությունը, ակնկալելով պաշտոնատար անձի գույքային դրության և շահերի վերաբերյալ տվյալներին տեղեկանալու իրավունքի իրագործումն իրականացնել պաշտոնատար անձի հայտարարագրին ծանոթանալու միջոցով, չի կարող իրացնել իր իրավունքը՝ այսպիսի տվյալների բացակայության պատճառով: Միաժամանակ, նշված տվյալների լրացուցիչ որոնման և ինչ-որ կերպ հայտնաբերման անհամաչափ միջոցներ գործադրելու լրացուցիչ պարտականությունչի կարող դրվել հասարակության անդամի վրա:

Ավելին, «Գավառտրանս» ՍՊ ընկերության կողմից Գավառի համայնքապետարանի հետ կնքված 10,000,000 ՀՀ դրամ արժողությամբ պայմանագիրը հանդիսանում է այն տվյալը, որն առհասարակ հրապարակված չէ որևէ հարթակում, ուստի բացահայտման այլ հնարավորություն չի ենթադրում:

Անդրադառնալով Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցիչների կողմից ներկայացված այն դիրքորոշմանը, որ իր հոր՝ Երվանդ Մարտիրոսյանի «Երյունյա» ՍՊԸ-ում բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալների չհայտարարագրման մասով Գուրգեն Մարտիրոսյանը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության՝ ելնելով անձնական պատասխանատվության և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքներից, ապա Հանձնաժողովը գտնում է, որ նշված փաստարկներն անհիմն են, քանի որ նշված տվյալները Գուրգեն Մարտիրոսյանը՝ որպես պաշտոնատար անձ, պարտավոր է հայտարարագրել իր հայտարարագրում, այսինքն՝ Օրենսդիրը պաշտոնատար անձին վերագրել է պարտականություն իր կամ իր ընտանիքի շահերի մասին տվյալներն իր հայտարարագրում ներկայացնելու, ինչն էլ նշանակում է, որ Օրենսդրի նշված պահանջի խախտումն ինքնին ենթադրում է անձնական պատասխանատվություն: Իսկ ինչ վերաբերում է Գուրգեն Մարտիրոսյանի հոր՝ Երվանդ Մարտիրոսյանի կողմից իր հայտարարագրում «Երյունյա» ՍՊԸ-ում բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալների մասին տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքին, ապա Հանձնաժողովն իր նախկին որոշումներում բազմիցս անդրադարձել է այն հանգամանքին, որ Օրենսդրի կողմից հետապնդվող նպատակի տեսանկյունից էական նշանակություն ունի օրենքով սահմանված տվյալների լրացումը պաշտոնատար անձի կողմից իր հայտարարագրում, այսպես.

Հանձնաժողովն իր կողմից կայացված նախորդ որոշումներով շահերի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձը հայտարարագրի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել իր մասնակցությունն առևտրային կազմակերպությունում, սակայն գործում առկա փաստերի համաձայն հաստատվել է, որ առևտրային կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է (ՎԻՎ 05/22): Հանձնաժողովը գտել է, որ կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Մեկ այլ գործով Հանձնաժողովը նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ նույն հայտարարագրի «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացվել է հայտարարատուի բաժնեմասնակցությունը առևտրային կազմակերպությանը, սակայն «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում չի ներկայացվել (ՎԻՎ/27/2022): Այս առումով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացված տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվել է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվել հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն որակվել է որպես նվազ նշանկություն ունեցող, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և գործի վարույթը կարճելու հիմք է հանդիսացել:

Սույն գործով առկա փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերով ներկայացված հանգամանքներից, նախևառաջ, այն առումով, որ առհասարակ

առկա չէ հայտարարագրված տվյալ Հայտարարագրի՝ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում:

Միաժամանակ, «Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում չհայտարարագրված տվյալները չեն հանդիսանում հայտարարագրի այլ բաժիններում ներկայացվող տվյալների հետ փոխկապակցված տվյալներ, հետևաբար հայտարարագրման ենթակա՝ Օրենքով սահմանված գումարը գերազանցող պայմանագրերի վերաբերյալ տվյալը ենթակա է ներկայացման միայն Հայտարարագրի համապատասխան բաժնում:

Սույն պարագայում, Գուրգեն Մարտիրոսյանի ընտանիքի անդամների մասնակցությամբ կազմակերպությունները գործող կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություններ են:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն իրողությունը, որ հայտարարագրման համակարգը նպատակ է հետապնդում պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկությունների բացահայտման միջոցով ձևավորել պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահություն և բարձրացնել նրանց գործունեության թափանցիկությունը:

Սույն գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանի որդու մասնակցությամբ «Գավառտրանս» ՍՊ ընկերությունը համայնքի կարիքների համար հինգ միլիոն դրամը գերազանցող պայմանագիր է կնքել Գավառի համայնքապետարանի հետ, մինչդեռ, Հայտարարագրում որևէ տվյալ չի ներկայացվել վկայակոչված պայմանագրի վերաբերյալ: Տվյալ պարագայում, Հանձնաժողովի՝ որպես իր մանդատի շրջանակներում շահերի բախման ինստիտուտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի, էական նշանակություն ունի օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանումը՝ հայտարարագրում հավաստի և ամբողջական տվյալներ ներկայացնելու հայտարարատու անձի պարտականության ոչ պատշաճ կատարման արդյունքում իրավանորմով պաշտպանվող հասարակական հարաբերությունների էությունը: Տվյալ պարագայում, սույն գործով քննարկվող հայտարարագրման ենթակա տվյալների հայտարարագրմամբ է

հնարավոր ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Անդրադառնալով արձանագրված իրավախախտումների առնչությամբ վարույթի մասնակցի ներկայացուցչի կողմից Գուրգեն Մարտիրոսյանի որդու՝ Յուրի Մարտիրոսյանի մասով ներկայացված առարկությանը և այն հիմնավորող ապացույցներին, Հանձնաժողովը գտնում է, որ դրանք հիմնավոր են և արժանահավատ: Ներկայացված ապացույցների առնչությամբ Հանձնաժողովը կատարել է լրացուցիչ ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է, որ ապացույցներով ներկայացված՝ Յուրի Մարտիրոսյանի փաստացի բնակության հասցեն համընկնում է Գուրգեն Մարտիրոսյանի կնոջ կողմից իր հայտարարագրերում նշված՝ փաստացի բնակության հասցեի հետ: Ավելին, Յուրի Մարտիրոսյանի կողմից նախորդիվ ներկայացված հայտարարագրերում որպես փաստացի բնակության հասցե նույնպես նշված է ապացույցներում նշված հասցեն: Ուստի վերը նշված բոլոր փաստերի համադրությունը Հանձնաժողովը բավարար է համարում արձանագրելու համար, որ 2023 թվականին Յուրի Մարտիրոսյանը փաստացի բնակվել է այլ՝ Գուրգեն Մարտիրոսյանի բնակության հասցեից տարբերվող հասցեում, հետևաբար չի համարվել նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ Գուրգեն Մարտիրոսյանի ընտանիքի անդամ, ինչը նշանակում է, որ Գուրգեն Մարտիրոսյանը չի ունեցել վերջինիս՝ որպես ընտանիքի անդամի, առևտրային կազմակերպություններում մասնակցության վերաբերյալ տվյալների հայտարարագրման պարտականություն:

Վերոնշյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Գուրգեն Մարտիրոսյանի կողմից Յուրի Մարտիրոսյանի՝ «Գավառտրանս» ընկերությունում 10% մասնակցության և «Գավառի ձկնաբուծարան» ՍՊ ընկերությունում ունեցած 85% մասնակցության վերաբերյալ տվյալը չի հանդիսացել հայտարարագրման ենթակա տվյալ, ուստի սույն մասով Գուրգեն Մարտիրոսյանի կողմից կատարված իրավախախտման դեպքը բացակայում է:

Ինչ վերաբերում է Գուրգեն Մարտիրոսյանի կողմից Հայտարարագրում սխալ տվյալ ներկայացնելուն, այն է՝ Յուրի Մարտիրոսյանին որպես իր ընտանիքի անդամ ներկայացնելուն, ապա Հանձնաժողովը գտնում է, որ նշված արարքով որևէ էական վնաս չի պատճառվել որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, հասարակությանը կամ պետությանը, ուստի նշված մասով իրավախախտումն ունի նվազ նշանակություն:

Հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող, ինչպես նաև մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Մարտիրոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Գուրգեն Մարտիրոսյանին տրամադրել եռօրյա ժամկետ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2023 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» տարեկան հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ